յափշտակած է Նորա վաճառականութիւնը, նա օր ըստ օրէ կ'ամի և սա երթալով կը մեղմանայ։ Ի պատմութեան նշանաւոր է Թայղան այնու՝ զի հոն վախճանած է յաղթողն Ա. Նապոլէոնի՝ Ա. ղէքսանդր Ա. Կայսր Ռուսաց 1825 ին։ Ամբային պալատն, որում 'ի դարձիս այցելութեան ելայ, անշուք է և կարասին շատ հասարակ. ասկէ 50 տարի առաջ, այն անշուք կարասեօք բաւականացել է աշխարհիս մեծազօր իշխողներէն մին, մինչդեռ այժմ մեր գաղթական Նախիջևանցի տանուտերանց բնակութիւնն և կարասիքն շատ աւելի վայելուչ են և ճոխ։ Գեղեցիկ է կայսեր պղնձաձոյլ արձանն, որ բարձր պատուանդանի վրայ կանգնած է քաղաքին մեծ հրապարակին վրայ. մեծ և ընդարձակ է քաղաքին զբօսական պարտէզը։

Գ

ԱԶԱԽՈՒԾՈՎ.

Ընդհատեալ ճանապարհորդութեամբ 20 ժամ ճանապարհորդելէն վերջ, ընդ երկայնութիւն ծովուս 'ի հարաւոյ դէպ 'ի հիւսիս, կ'արժէ քանի մի տողեր նուիրել այս ծովուս. ես այնպէս կարծեմ՝ որ այս ծովակս իւր աշխարհագրական դրիւքն և ձևով հետաքրքրական է՝ եթէ ոչ ամենուն, այլ գոնէ աշխարհագրութիւն ուսանող համբակաց։ Ինքը փոքր, այլ ծով անունը կը կրէ հաւասար մեծամեծ ծովերու. դիրքը՝ Եւրոպայի մի անկիւնը, ագռաւի թևի նման կպած է Սև ծովուն՝ զոր աւելի լիճ կարելի է զրուցել քան թէ ծով.